ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» սեպտեմբերի 2024թ. № 918

ՀԱՄԼԵՏ ՄԱՐՏՈՒՆԻ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԲՆԱԿԱՐԱՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 111-Ա որոշումը, Սպիտակի քաղաքապետի 2002 թվականի հունվարի 15-ի թիվ 2 որոշման հիման վրա տրված բնակելի տարածության թիվ 4 օրդերը և Համլետ Մարտունի Դանիելյանի ներկայացուցիչ Աղվան Թադևոսի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10092024-06-0051 վկայական՝ տրված 10.09.2024 թվականին) «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ Սպիտակ ք. Ս.Ավետիսյան հրապարակ 8 շենք, 3 բնակարան» հասցեի բնակարանը նվիրատվությամբ փոխանցել Համլետ Մարտունի Դանիելյանի ընտանիքին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն.

1) Համլետ Մարտունի Դանիելյան - ինքը՝ ծնված 07.07.1952 թվականին,
2) Հովհաննես Համլետի Դանիելյան - տղան՝ ծնված 07.07.1990 թվականին,
3) Վոլոդյա Համլետի Դանիելյան - տղան՝ ծնված 18.08.1991 թվականին,
4) Հարություն Համլետի Դանիելյան - տղան՝ ծնված 26.05.1995 թվականին:

2. Նվիրառուների հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Հանձնարարել աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետում փոփոխություն կատարել համայնքի գույքային հաշվեկշռում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 18
ք.Սպիտակ